

Ռուսները նրան անուանում են հայոց գիւղ (Армянская), թէև մի քանի տարի է՝ իրանցից էլ մի քանի տուն մնում են այդտեղ հայերի հետ խառը: Սօցիի հայ գիւղերի մի ծայրից մինչև Ջափշուկայի վիճակի հայ գիւղերը՝ օրերով ճանապարհ կա: հարիւրաւոր վերստեր է քաշում: Մի 4—5 հարիւր տուն էլ Անապայի, Եկատէրինօգարի, Մայկօսլի ու Խրիմի կողմերում կըլինին: Դրանց վիճակը ամենքից աւելի կորած ու անմխիթար է:

Այդքան հայերից միայն մի փոքր մասն է ռուսահպատակ. շատ-շատ մի 300 տուն. գոնէ այսօր Աովկասեան ավերում նրանց թիւը շատ չէ: Գուցէ թիւը քահայերին Աովկասի սահմաններից հեռացնելու վերաբերմամբ կացացած բարձրագոյն կարգադրութիւնից յետոյ՝ շատերը կաշխատեն ռուսահպատակութիւն ընդունելու, այդ չը գիտեմ: Այնքանը գիտեմ միայն, որ այսօր նրանց ամենամեծ մասը, հազարաւոր հայեր դեռ ևս մնում են թիւը քահպատակ, չուզենալով բոլորովին կտրուել, բաժանուել իրանց մայր-երկրից:

Այսպիսով Աովկասեան ավերում և նրանց մօտիկ տեղերում ապրող բոլոր համշէնցի հայերը ամենաշատը հազիւ մի 2500 տուն կը լինին. եթէ մի 2—3 հազար էլ մենակ, աշխատելու եկած, անտնւոր բանուորների թիւը գցենք, կը ստանանք մօտաւորապէս 15 հազար հոգի. ամենաշատը այդքան կը լինին: Աովկասում և Ռուսիայում ուրիշ ոչ մի տեղ (բացի յիշուած Խրիմի ավերից) համշէնցի հայեր չըկան: Բոլորը դրանք են և մէկ էլ՝ հայրենական ավերում մնացողները: Եթէ նրանց էլ սրանց չափ ընդունենք (Նիկօմիդիայի կողմերը գնացողների հետ միասին), կը ստանանք բոլոր համշէնցի կոչուած թիւը քահայերի թիւը՝ ընդամենը 30 հազար:

ՀԱՄԱԴԵՆՑԻ ՀԱՅԵՐԻ ԿԱԶՄՈՒԱԾՔԸ, ԲՆԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ, ԶԳԵՍՏՆ ՈՒ ԲՆԱԿԱՐԱՆԸ:

Տեսքով՝ Սև ծովի ավերի հայ գաղթականները յիշեցնում են մեզ մեր տեսած ու գիտցած թիւը քահայ հայրենակիցներին, թէև ընդհանրապէս սրանց կազմուածքի, շարժմունքի ու վարմունքի մէջ բաւական տարբերութիւն է նկատուում, համեմատելով սրանց Մշի, Վանի և առհասարակ հայաստանի դաշտային գիւղացիների հետ: Համշէնցի հայը, մանաւանդ անատօլիական ավերից նոր եկածը, իր շարժմունքների մէջ աւելի կրակ ու կենդանութիւն է ցոլացնում, քան այն տեղերից եկողները: Սա իր հայրենիքի լեռնային բնութեան համեմատ, իր շարժմունքներով ու ձևերով իսկական լեռնցու պատկերն է յիշե-

ցնում. թեթև ու արագաշարժ, ժիր ու ճարպիկ. իսկ հագուստն խօսուածքն էլ մի առանձին լեռնային գոյն են կրում: Ա՛խշտ է՝ կազմուածքով նրանք այնքան առողջ ու յաղթանդամ տեսք չունին, ինչպէս առհասարակ բոլոր լեռնցիները, թէև քիչ չեն նրանց մէջ հսկայ ու քաջառողջ կտրիճներ, բայց բնաւորութիւնով շատ սրտոտ ու համարձակ մարդիկ են, զէնքը գօտուց ու ձեռքից անբաժան: Իրանց ամեն մի քալով ու տարագով սրանք չիշեցնում են լազերին:

Սրանց հագուստի մէջ էլ անբաժան է Քէւը, «շուխ» շաւարն՝ ու «կէֆ» նրանց տակը «իւլի» ու «էշուլ», և կաշուէ լայն գօտին — «շուշուլ». մի խօսքով՝ զգեստի այն բոլոր տեսակները, որ յատուկ են Թիւրքիայի շատ կողմերի ժողովրդներին: Բայց սրանց «շաւար» այնպէս լայն չէ, ինչպէս սովոր ենք տեսնել էրզրումցոց և կամ վանեցոց մօտ, որոնց հագածը ջուալի նման կախում է ներքև և լաւ չի նստում: Սրանց «շաւարը», ընդհակառակը, ներքևն այնքան նեղ է լինում, որ բոլորովին կաշում է սրունքներին և չի խանգարում բանելուն ու շարժուելուն: «Չաւարի» վրայ նա կապում է բազմաձալ կաշուէ գօտին, որի ծալքերում նա պահում է թուփուներ, «շախալ» և երբեմն զանազան հարկաւոր թղթերը: Գօտուց կախած կը տեսնէք ռէվօլվերը կամ անբաժան դանակը՝ պատեանի մէջ դրած: Նրանց կանանցից շատերի մօտ կը գտնէք այդպիսի դանակներ, թէև նրանք այդտեսակ կաշուէ գօտիներ չեն կրում: Ֆէսը, սովորաբար, փաթթում են «շախալ», որ մի բարակ քօղ է և յատկապէս ֆէսի համար են բանեցնում:

Կանանց հագուստն էլ թէև թիւրքական տարագով է, բայց պէտք է ասեմ, որ այնքան գեղեցիկ չէ, ինչքան տղամարդկանցը: Սրանց մօտ էլ աչքի է ընկնում թիւրքական ձևի հագուստներից «կէֆ», որ սովորաբար «իւլ-թուլ» ու մետաքսէ նաշխուն իրեղէններով է լինում զարդարուած. իրանք դրան պարզապէս «շուխ» են ասում (մահուդի կտորից լինելու համար, չուխա-մահուդ): Երբ որ «շուխ» չեն հագնում, նրա տեղը հագնում են անթև ու երկայն չթէ «էշուլ», որ եթէ «դսնաւուր» է՝ երբեմն մետաքսից ու գոյն-գոյն թելերով են շինում. տակից հագնում են «իշլիղը» և վերջապէս երկայն շապիքն ու վարդիքը, իսկ դրսից «ելաղի» ու շապիքի վրայից կապում են գոգնոցը — «էշուլ-էֆ-շուլ»: Սովորական, ամենօրեայ «իւլի» ու «ելաղը» չափով ու ձևով իրար նման են լինում, այնքան որ առաջինը թևով է ու տակիցն են հագնում, միւսը անթև է ու վրայից: Այդ բոլոր շորերի մէջ ամենքից աւելի աչքի է ընկնում նրանց կարմիր ծաղկաւոր, չթէ լայն-լայն վարտիքը, որ նրանց խելքով ու ճաշակով անպատճառ պէտք է ներքև երևայ, թէ չէ անպատշաճ բան կը լինի: Զրջագգեստ և առհասարակ կանանց երկար հագուստ ոչ միայն չունին, այլ

և, ինչպէս երևում է, այդ տեսակ հագուստը նրանց մէջ այնքան էլ համարմունք չի վայելում: Նրանք էլ են գլխին ֆէս դնում, բայց առանձին կերպով չարմարեցնում գլխին, ներս ծալելով ու դէպի յետ ծռելով, ճակատի կողմից էլ մի բարակ, ծալած քօղով՝ կապելով ֆէսը գլխի հետ, մի ուրիշ բարակ, գունաւոր քօղով էլ — «լաւալ» — փաթթելով գլուխը բլի տակից: Այդ ճակտէկապին նրանք «յէփալ» են ասում և միայն կանաչքն են կապում. աղջկերք չեն բանեցնում. «կալալ» — սովորաբար տղամարդիկն էլ են կապում ֆէսների վրայ, բայց այնպէս ծալծլելով ոլորում են ֆէսի վրայ, ամբողջապէս չեն ծածկում: Գլխի զարդարանք համարեա չեն բանեցնում: Ոսկեղէն բոլորովին չունին. շատ քիչ անգամ է պատահում նորահարսների գլխին տեսնել արծաթէ զարդեր՝ կախկիսած մագերի հիւսերի հետ, երբեմն էլ արծաթէ ձտնոցներ — «թօղաղլալ»: Ականջ ծակելու սովորութիւն թէև ունին, բայց սովորաբար օղեր չեն բանեցնում. բանեցնողներն աւելի նորահարսներն են լինում: Նրանց ամենատարածուած զարդարանքը մատանին ու ապարանջանն են, որոնք բոլորն էլ հասարակ, կոպէկանոց բաներ են լինում, սովորաբար երկաթից կամ դեղին պղնձից, շատ-շատ միայն մատանիներն են լինում երբեմն արծաթից: Մատանիներ դնելու սովորութիւնը տղամարդիկն էլ ունեն:

Այստեղ հագուստին վերաբերեալ բոլոր ասածներս վերաբերում են աւելի Անատոլիական ափերից նոր եկած համշէնցիներին: Հին, տասնեակ տարուան եկողները, ինչպէս շատ բան հայրենական կեանքից ու սովորութիւններից, այնպէս էլ հագուստը քիչ-քիչ սկսել են փոխել, ենթարկուելով շրջապատող ազգերի ազդեցութեանը: Այսպէս սկսել են արդէն ֆէսի տեղ մորթէ գլխարկներ ու «բաշլըղներ» բանեցնել, տրեխների տեղ չուստ («չափուլա») կամ ձտով կօշիկներ հագնել: Քիչ-քիչ սկսել են վերի շորերն էլ փոխել. միայն «շալուարն» է մնացել. իսկ ներքին հագուստը համարեա ամեն տեղ՝ հայրենական սովորութիւնով՝ իրանց ձեռագործ կտաւից են կարում: Նոյն փոփոխութիւնն է նկատուում և կանանց շորերում. կամաց-կամաց նրանք էլ են սկսում հին ձևի փոխել: Հետզհետէ «կաբաները» տեղ են տալիս նոր ձևի, ուռած թևերով «կէփալէփալ», իսկ վերջերս խիստ ձգտում են ցոյց տալիս շրջազգեստ հագնելու, թէև մի քանիսը շրջազգեստի վրայից դեռ էլի հայրենական գոգնոցն են կապում: Զգեստի փոփոխութիւնը, ինչպէս և ամեն բանի, աւելի աչքի է ընկնում Չերնօմօրի վիճակում, ուր համարեա թէ հայրենական տարազից նշոյներ էլ չեն մնացել. թէ տղամարդիկ և թէ կանաչք իրանց տարազով համարեա բոլորովին ռուսների են նմանւում:

Համշէնցիների տները համարեա կլոր փայտից են շինուած, բայց

կան տախտակաշէն և կաղնու ճղներից հիւսուած տներ էլ. վերջին տեսակներին «չիթ» են ասում: Քարաշէն տներ համարեա թէ չը կան. սովորութիւն չեն ունեցել: Նրանց եկեղեցիներն էլ թէ հայրենիքում և թէ այստեղ, փայտից են շինուած: Ամբողջ Սուխումի շրջանում քարաշէն տուն հազիւ թէ երկու-երեք հատ գտնուի: Զինաձ տների մեծ մասը երկյարկանի է. տակը՝ գոմ, վրան՝ տուն: Նրանցից շատերը համարեա մի հատ կարգին պատուհան չեն ունենում: Լոյսի համար փոքրիկ ծակեր են թողնում պատերի մէջ և մի փոքր բացուածք էլ ծածքի մէջտեղը, օջախի գլխին, այդ էլ աւելի ծխի, քան լոյսի համար («բաջա» թ.): Արակի համար ջուկ տեղ չեն շինում, տան մի անկիւնում. նոյն իսկ լաւ տներումն էլ առաջուան ժամանակների պէս նահապետական օջախն է լինում տան մէջտեղը, որ ամառ-ձմեռ վառում են: Սովորաբար՝ խաւարը, ցուրտը, ծուխն ու խոնաւութիւնը անպակաս են նրանց տներից: Հողէ կտուր՝ բոլորովին չըկաջ նրանց մօտ: Նրանց սովորական ծածքը — մանր կտրտած տախտակից է լինում, որ հանում են աւելի կաղնու և հաճարի ծառերից, («ծածուկի տախտակ», «խարդումա» թ. драхъ). իսկ աւելի խեղճերի տները «ըմփրով» («իմփր»՝ խոտ է, папоротникъ) կամ «ձեղով» (սիմինդրի չոր ցօղուն) են լինում ծածկուած:

Համշէնցիները, ինչպէս և մեր կողմի գիւղերում, սովորաբար տները իրանք տէրերն են շինում, երբեմն միայն դրսից վարպետներ վարձում, աւելի իրանց համագիւղացիներից, այդ էլ աւելի այն ժամանակ, երբ իրանք շատուոր չեն լինում և գործ էլ շատ են ունենում: Վերջին տարիները շինած նրանց բոլոր լաւ տները դրսից եկած օտար վարպետների շէնքեր են: Տներ սովորաբար շինում են աշնան, թու-թունի քաղը վերջացնելուց յետոյ, իսկ թու-թունի համար պահեստի շէնքերը՝ աւելի գարնան, թու-թունը «սադրելուց» (տնկել) յետոյ: Տները սովորաբար չեն սուաղում, միայն ձմեռը մօտեցած ժամանակին ձեռքով աղբ են քսում արաներին, որ ծակերը ձեփուին, վերջերս սկսել են լաւ տները կրով սուաղել: Նրանց տները սովորաբար վերևներքև երկ-երկու աչք են ունենում, միջի դռնով իրար կցուած: Վերին չարկի աչքերից մէկը մեծ է լինում, միւսը փոքր: Մեծ աչքը քաշ է կոչում. այդտեղ են սովորաբար նստում-վեր կենում, ուտում ու պառկում. փոքրին՝ «մառօն» են ասում. այդտեղ են գլխաւորապէս տան աւելորդ իրեղէնները պահում, փոխնորդներ կախ անում, իրանք փոխում. իսկ հարսանիքի ժամանակ էլ հարսի առանձնասենեակն է. սովորաբար պսակն էլ այդտեղ են անում: Այդ տեսակ տներն առհասարակ լայն պատշգամ էլ են ունենում — «հայեաթ», որ սովորաբար փողոցի կողմից տախտակներով փաթթուած է լինում՝ քամուց ու

ցրտից պաշտպանուելու համար, և աւելի տան մանր բաներ ու երկրագործական բերքեր պահելու և մաքրելու համար է ծառացում, քան տեսարանին: Սովորաբար այդտեղ են պահում ամբարը. կանաչքն էլ իրանց ճախարակը այդտեղ են սարքում ու կտաւ գործում և իրանց ձեռագործ նաշխուն եաղլուխները հէնց այդտեղ կախում պատից, դռան մօտիկ: Պատշգամբի տակը անասունների կանգնելու տեղ է. անձրեւին ու վատ եղանակին այդտեղ են կլթում կովերը:

Մի քանիսը տան պատշգամբի կամ ջուկ տեղում, տան մօտիկ, մի սենեակ են շինում հիւրերի համար, որին «օդ» են ասում: Յատուկ «օդա» են շինում և թուլթունի ծրարը կապելու համար. երբեմն միւսնոյն աչքը հիւրերին էլ է ծառացում, թուլթունին էլ. մանաւանդ որ տարուաչ մեծ մասը պարապ է լինում և միայն ծրարը կապելու ժամանակն է հարկաւոր գալիս: Դրան էլ «դմբի օդ» են ասում: Բացի այդ «օդալից», թուլթունի համար երկու ուրիշ շէնք էլ են շինում. մէկը ծառացում է որպէս թուլթունը չորացնելու տեղ, միւսը իբրեւ պահեստատեղ: Երբեմն երկու շէնքերը միացնում են. տակը չորացնելու համար են գործածում, վրան՝ կախում ու պահում են չորացած թուլթունը, երկուսն էլ մի ծածքի տակ: Չորացնելու տեղը, կամ ինչպէս հայերն են ասում, «մաշինա» — սների վրայ կանգնած մի պարզ շէնք է, որ առջևի կողմից բոլորովին բաց է, իսկ երեք կողմից ցախով կամ ծառի ճղներով պատած, որպէսզի քամին ներս չըփչէ: «Մաշինան» մի քանի աչք է ունենում, նայելով թէ ինչքան տեղ է բռնում թուլթունի պլանտացիան. ի հարկէ՝ եթէ շատ է, տեղն էլ շատ կուզէ: Սովորաբար երկու աչքից պակաս չի լինում, բաց լինում են և մինչև 10 աչքանի շէնքեր: Երբ որ պակաս է գալիս, մի կողմից կցում, աւելցնում են: «Մաշինի» առջևից՝ ամեն մի աչքի դիմաց — հորիզոնական կերպով ձողեր են լարուած. գետնից մարդաչափ բարձր, նեղուկների վրայ հաստատուած: Այդ հողերի վրայով դուրս ու ներս են հանում փայտէ շրջանակներ — «մաղեր», որոնց վրայ թելերով թուլթուն է շարուած: Թուլթունի պահեստատեղը — «մաղազա» — շինում են բոլորովին գետնի վրայ և չորս կողմից տախտակով լաւ պատում են, որպէս զի դրսի օդի խոնավութիւնը չը ներգործէ ներսը կախած թուլթունների վրայ: Համշէնցիների շինած բոլոր շէնքերի մէջ ամենամեծ շէնքերը այդ երկուսն են լինում. դրանց վրայ շատ անգամ աւելի ծախս ու աշխատանք են թափում, քան իրանց սեփական կացարանների վրայ: Մնում են էլի երեք ջուկ-ջուկ շէնք. մէկը՝ որ ամենքն անպայման ունենում են, գլխով սիմինդր պահելու համար է. սովորաբար փոքրիկ շէնք է, տան ձևով, ամուր սների վրայ հաստատուած, գետնից մի սաթէնաչափ բարձր. դրան հայերն ասում են «կօրօբ»: Հասարակ «կօ-

րօքները՝ կաղնու ճղներից հիւսուած կլոր կամ քառանկիւնի ձև ունին, «ճեղով» ծածկուած: Լաւ շէնքերը շինուած են տաշած կլոր փայտից և մանր տախտակով են ծածկուած: Միւս երկու շէնքերն են՝ փուռը և մարագը: Փուռը տան մէջ չեն շինուած, այլ ջոկ տեղ, առանձին ծածքի տակ. իսկ մարագը հասարակ «չթէ» շէնք է, խոտով կամ «ճեղով» ծածկուած: Սովորաբար այդ բոլոր շէնքերը շինուած են տներին մօտիկ, գիւղամիջում. երբեմն միայն պակաս եկած, նոր շինուելիք «մաշինաները» շինուած են թութունի սլանտացիաներում, եթէ տեղը չարմար են գտնուած:

ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ:

Համշէնցիները թէ իրանց հայրենական ափերում և թէ այստեղ բացառապէս երկրագործութիւնով են պարապում: Եթէ համեմատելու լինինք մեր կողմերում ապրողներին հայրենական ափերում մնացողների հետ, նրանց պարապմունքի ու տնտեսութեան ձևերի մէջ շատ քիչ փոփոխութիւն կը գտնենք, եթէ չընչենք ու մի կողմ դնենք թութունի մշակութիւնը, որ շատ տեղ հայրենիքում արդէն բոլորովին վերջացել է, իսկ եղած տեղերումն էլ հետզհետէ աւելի յետ է գնում: Մինչդեռ մեր Աովկասեան ափերում այդ բոյսի մշակութիւնը մի քանի տարուց դէսը դարձել է մի անպիսի տիրապետող ու գլխաւոր պարապմունք, որ անկարելի է երևակայել այդտեղ, մասնաւորապէս Սուխումի շրջանում մի հայ գաղթականութիւն, մի հայ գիւղ, նոյն իսկ մի հայ գաղթական, որ դրանով պարապելիս չը լինի: Թութունը մեր կողմի համշէնցի հայերի արդիւնաբերութեան մէջ առաջին ու ամենագլխաւոր տեղն է բռնում: Սուխումի շրջանում տասնեակ հազար փութ թութուն միայն համշէնցի հայերն են արտադրում: Դրանից կարելի է հասկանալ, թէ ինչքան մեծ չափեր է ստացել այդ բոյսի մշակութիւնը նրանց մօտ: Թիշտ է՝ Չերնօմօրի կողմերում, բացի Սօչիի շրջանից, թութունի մշակութիւնը այնքան մեծ ծաւալ չունի, բայց հաստատապէս կարելի է առաջին տեղը տալ համշէնցի հայերին ամբողջ Աովկասեան ափերի թութունի արդիւնաբերութեան մէջ:

Հացաբոյսերի մէջ առաջինը և ամենատարածուածը նրանց մօտ սիմինդրն է, որ ինչպէս հայրենիքում, նոյնպէս և այստեղ, կազմում է նրանց գլխաւոր ուտելիքը, նրանց ամենօրեայ հացը: Ամբողջ Աովկասեան ափերի համշէնցիների մօտ այդ բերքը համարեա ոչ մի տեղ չէ արտահանում. միայն իրանց համար են ցանում: Տեղ-տեղ էլ եր-